



ԱՂՊԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 48

ՆԻՒ ԵՈՐԲ, ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 8, 1898

ԳԻՆ 3 ՍԷՆԹ

ՁԵՅԹՈՒՆԻ ՍԻՒՆԸ

Թրոյէն Տ. Մ. Պ. Մատթէոսեան նամակաւ մը 6 տօլար զրկած է մեզ զոր Հանգանակած է վեց ընկերներու մէջ:

Նօկաթուկէ Տ. Ն. Բուրինեան 1 տօլար զրկած է մեր գանձապետին: Ստացագիրներն պիտի զրկուին նուիրատուութեան կարելի եղածին չափ չուտ:

Փրովիտէնէ Բուրվառ կը գրէ: «Անցեալ կիրակի ընդհ. ժողովի մը մէջ Տ. Տէրոյեան մէջ բերաւ Ձէյթուի խնդիրը: Հայր Վաղինակ անմիջապէս Հանգանակութեան ձեռնարկելով 99 տօլար Հանգանակուեցաւ: Կը յուսանք 300ի Հասնի գումարը: Եթէ ամեն Հայ մասնակցի Հանգանակութեան, 500 ալ կըլլայ, բայց միայն 200 ի չափ Հայեր են որք կը մասնակցին ամեն բանի»:

Մեր Պրայթընի թղթակիցը կը գրէ մեզ թէ անցեալ կիրակի օրը ընդհանուր ժողով մը տեղի ունեցած է Ձէյթուի Համար: 31 տօլար Հանգանակուած է:

Մանչէսթըրի մեր թղթակիցը կը գրէ թէ տեղւոյն Հանգանակութեան արդիւնքը եղած է 56 տօլար: Հանգանակութեան մասնակցած են տեղւոյն բոլոր Հայերն բացի երկուքէն: Դրամը յանձնուած է տեղական յանձնարարին պահելու զայն մինչև ընդհ. գանձապետի ընտրութիւնը:

Վօքսիկանի Հայք ընդհանուր ժողովոյ մը մէջ անցեալ կիրակի օր Ձէյթուի խնդիրն նպատակ Հանգանակութիւն մը ըրին որոյ անմիջական արդիւնքն եղաւ 30 տօլար: Երեք հոգիէ յանձնարուած մը կազմուեցաւ Հանգանակութիւնը շարունակելու պաշտօնով: Այս ժողովին մէջ խօսեցան Մաշթոց վարդապետ և Պ. Աղատեան:

Համբնտի և Ուէսթ Փուլմընի մէջ ևս ժողովներ ու Հանգանակութիւններ եղած են որոց արդիւնքը դեռ չէ ծանուցուած մեզ:

Մօլարնէ կը գրեն թէ այս մօտերն Հանգանակութիւն մը կըսկսի տեղւոյն Հայոց մէջ:

Լօրէնսէն վերջի պահուս առնուած նամակ մը կըսէ թէ տեղւոյն Հանգանակութիւնը փակուած ու որոշուած է Հասոյթը առանց միւսներու սպասելու՝ նպատակին Հասցնել:

ՄԻԼՖՐԵՍ, Մաս. Հնկ. 3

ՍԻՐԱԳԻՐ ՏԻԳՐԻՍԻ

Տեղա Հնչակեան մասնաճիւղ ոչ եղած է և ոչ ալ ներկայիս կայ: Հետեւաբար ՏԻԳՐԻՍԻ 47 թուոյն մէջ սխալմամբ ըսած էր թէ յիշեալ մասնաճիւղը 10 տօլար նուիրած է Ձէյթուի, մինչդեռ այդ գումարը տեղւոյս Աղագանամ Ընկերութեան գանձէն տրուած է:

Ի Դիմաց Աղագանամ Ընկերութեան Ատենադպիր Մ. Մ.

ՍԱՐԱՃԵԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Մանչէսթըրէ Հեռագրուած է Ազգային Հոգաբարձութեան ատենատին թէ Գեր. Յովսէփ Եպիսկոպոս Սարաճեան Քամբրիջ շրջանուով ճամբայ ելած է շաբթուս մէջ իւր պաշտօնավայրն գալու:

Քամբրիջ կը Հասնի Նիւ Եորք յառաջիկայ շաբթ ատուտ կանուի: Հոգաբարձութիւնն մասնաւոր կարգադրութիւններ ըրած է արժանավայել ընդունելութիւն մը ընելու Համար Սարաճեան Սրբազանին:

Քամբրիջ այն նաև է որով տարիներ առաջ մեկնեցաւ Սրբազանը:

Մ Ա Ն Բ Ա Ն Ո Ւ Բ

Մակարեան Եղբայրներն, որք Ալանեան անուն մէկը գանակածներ էին Լինի մէջ, դատուելով 25ական տօլար տուգանք վճարեցին:

Կարվանսան, որ պարտքի վերաբերեալ դատի մը մէջ գատուորի Հրամանին չի Հնազանդած ըլլալուն Համար բանտարկուած էր, ազատ արձակուեցաւ Պ. Գրեյվիլի քանի որ արձախուսուած էր:

Ուէսթ Հոպըքընի լսարանի ժողովին մէջ Տ. Մարգարեան շատ մի Հետաքրքրական լուրեր Հաղորդեց անցեալ կիրակի Տրէզնօյի տեղւոյն Հայոց վիճակին վրայ, անակ որ ունկնդիրներէ շատեր փափաք յայանեցին Արևմուտք երթալ:

Պրուքտընէն մեզ կը գրեն. «Մի քանի Հայեր հոս գործելու եկած էին գործարանի մը մէջ որուն գործաւորները գործադուր ըրած էին: Երեկոյին ասոնք պանդոկ մը կերթան ու անունին կարճանագրեն ու երբ ճաշարան կը մտնեն, պանդոկին միւս բոլոր Հիւրերն կ'սպասեն որ ուր ինչ շէնքէն եթէ Հայերն Հոն պահուէին: Պանդոկատէրը դատարարները դուրս կը դնէ, ուր բազմութիւն մը խոնած է կղեր: Կոնը կսկսի մէկի դէմ Հարիւր: Շատեր կը վերաւարուին. ոստիկանութիւնը վրայ կուգայ ու կը ձերբակալէ քանիներն»:

Միտլըպօրօէն թղթակից մը նոյն վայրէն (Պրուքտըն) կը լսէ թէ անցեալ օր Հայ մը սպաննուած է Հոն գործադուր ընող գործաւորներէն. և կը յաւելու թէ այս լուրը դեռ ստուգութեան պէտք ունի: Նոյն թղթակիցը կը լսէ նաև թէ Քէմփուալի մէջ, ուր նմանապէս գործադուր մը կայ, Հայ մը շարաշար գանակուած է անկողին ինչպիսի աստիճան:

Մեր Շիքակոյի թղթակիցը կը գրէ. «Մաշթոց վարդապետի դէմ ժողովրդի մէջ արտունջներ յառաջ եկած են, որովհետև երկասարք վարդապետը ժամանակի մեծ մասը Ե. Ք. ընկերութեան լսարանը ու մարմնամարզութեան սրահը կանցունէ և երբեմն միայն կայցելէ Հայերն»:

Ժողովուրդը գործնական բաներ կը պահանջէ կղերէն:—Այս տարի Շիքակոյի Հայ ուսանողաց թուոյն վրայ աւելցան Տիարք Գրեյքեան և Պոյաճեան:—Վօքսիկանի թիւի գործարանի մէջ աշխատող Հայերն սկսած են Գրեյքեան երթալ, Հոն նոր բացուած թիւի գործարանին մէջ աւելի Հաւար օրական գտնելով:

Փրովիտէնի Ֆալթիքէյն ժողովի միջադէպի մասին պատահական թղթակցէ մը մեզ Հաղորդուած լուրերն, որք Հրատարակուեցան մեր 46 երրորդ թուին մէջ, քանի մը սխալներ կը պարունակեն եղեր: Այս մասին յուզուած մ'տքերն Հանդարդեցնելու Համար մեզմէ խնդրուած է Հետեւեալ կէտերն ուղղել: Յիշեալ ժողովի վրայ Հայերն 7 տարիէ ի վեր կապրին եղեր առանց ո' և է տըրտունջի տեղի տալու: Մի քանի ամիս առաջ Հայոց ճաշարան մը կը բացուի այդ ժողովի վրայ, ուր կը ճաշեն շատ մը Հայեր: Օգոստոսի վերջերն տաք օր մը յաճախորդներէն խելացի մէկը կը մերկանայ ու բակին մէջ ուրիշ մը ջուր լեցնէ վրան. այս կըլլայ զայթակողութեան պատճառն որ կը կրկնուի քանի մը անգամ: Սա պատճառաւ Կառավարութիւնն Հրաման կընէ ճաշարանին ու անոր կիցը գտնուող Հայոց տունին անկէ պլուր փոխադրուիլ. իսկ նոյն ժողովի վրայ ընակող միւս Հայոց կառավարութիւնն ոչինչ ըսած ունի:

Մեր Ուսթըրի թղթակիցը կը գրէ. «Անցեալ կիրակի տեղւոյս որբախնամ ընկերութիւն անդամական ժողով մը ունեցաւ. որոյ անդամներու թիւը 52ի Հասած է: Վերջի շրջանի մէջ §93.32ի մուտք եղած է. իսկ §59.09 ելք: Որոշուեցաւ Պատրիարքարանի միջոցաւ որբի մը ծախսը վճարել ու որդեգրել զայն ընկերութեան անունով: Նոր ընտրութիւն ըլլալով գործադիր ժողովոյ անդամ ընտրուեցան Տեարք Գոյաճեան, Պոլիկեան, Պոյաճեան, Ռատիկեան, Ծանիկեան, Յովակիմեան և Նաղուպեան»:

Փրովիտէնէն Բուրվառ կը գրէ. «Տեղւոյս ազգ. ժողովները սկսան: Երկու ժողովներու մէջ խօսեցան Տրք. Շահպաղեան և Մանուէլեան նիւթ ունենալով «Գերման գաղթականութիւնը դէպի Հայաստան»: Նկատելով որ այս տարի կառավարութիւնը գրեթէ ոչ ոք պարտաւորութիւններ չէ ծախքի պատճառաւ, վերջի ժողովին ատենապետը թեւադրեց որ մենք Հոգանք մեր կրթութեան ծախքը»:

Վօքսիկանի երկաթի գործարանի մէջ անցեալ օր Հայ մը անգուշուութեամբ աստի մեծ տակառի մը մէջ ինչպիսի մեծած է անմիջապէս:—Կ. Պօլէն Հոկտ 5 թուականաւ քաշուած Հեռագիր մը կըսէ թէ ամերիկեան նոր դեսպանն Մր. Ըսթրավալ Ներքաթի օր Պօլիս Հասած ու իր պաշտօնին գլուխը անցած է: Թուրք կառավարութեան դէմ պահանջ ունեցող Հայոց աչքը լոյս:

«ՊՁՏԻԿ ԿՈՏՈՐԱԾ ՄԸ»

Շաբթուս ամերիկեան թերթերը Հոնոնէն Հեռագիր մը Հրատարակեցին որով կը գուժուէր թէ Ալազկերտի մօտերը վայրագ թիրախերը յարձակած են Ռուսաստանէն վերադարձող Հայ գաղթականներուն վրայ ու անոնցմէ 50 հոգի ջարդած են:

Թուրք կառավարութիւնը, որուն Հրամանով եղած է անշուշտ այս «պղտիկ կոտորածը» Համախառնութեամբ, անմիջապէս յայտարարեց Եւրոպայի թէ միայն 15 Հայ ջարդուած են, ու անոնք ալ յեղափոխականներ են:

Իրրե թէ յեղափոխականները Հայ չըլլային...

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՔ Ի ՆԻՒ ԵՈՐԲ

Հանրապետականներէ վերջ, որք անցեալ շաբթու նահանգապետի Համար իրենց ընտրելի անուանեցին Սանթիակոյի դիւցազներէն Գնդապետ Ռուզվելթ, Ռամկավարականք ալ նոյնը կատարեցին ընտրելի անուանելով Պրուքլինի անուանի գատուորներէն Ճըսթիս Օ. Վան Վայք, Նիւ Եորքի քաղաքապետին եղբայրը, թէ և գատուորին ընտրուիլ աներկբայ կերևի, բայց այսու Հանդերձ Ռամկավարականք մեծ պայքարի մը կը պատարաստուին յաջորդ ամսուան Համար: Հայերը այս անգամ իրենց ձայնը լսելի պիտի ընեն արդեօք Հաւաքաբար...

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Վ. Վ. — Համբնտ — Ինչ ընենք ձեր զրկած 25 սէնթի նամակագրօմը: Ձեր Հասցէն նորէն զրկեցէք:

Յ. Գարակէօզեան — Ձեր զրկած 40 սէնթի նամակագրօմը ստացած ենք. ձեր Հասցէն զրկեցէք որ թերթ զրկենք:

Յ. Թ. Ուէսթ Հոպըքըն — Այդ խնդիրն փակած ենք. զայն նորէն չենք կրնար բանալ:

Մ Ա Հ Ա Գ Ո Յ Ժ

Տ. Մ. Եղոսեան, որ ազգականօք Հանդերձ Լին կը բնակէր, յետ երկարատեւ հիւանդութեան իւր մահկանացուն կնքեց Պօլթընի Մասաչուսէթս Հիւանդանոցի մէջ, անմիջապէս թողով ընտրութեան 10 արեւկան իր միամօր գուտարը: Թագման արարողութիւնն կատարեց Տ. Վաղինակ վարդապետ: **

ԵՐԿՆԱՅԻՆ ԼՈՅՍԵՐ

Գրեց Պատ. Յարութիւն Ֆիլեան Այս քարոզարքէն ունենալ փափաքողները կրնան մէյմէկ օրինակ ձրի ստանալ դիմելով վարը գրուած Հասցէին: Ուրիշ քաղաքներէ դիմում ընողներն պարտին 9 սէնթի ըսթէմը զրկել ծախուց Համար: 50 Մ. Չամակեան, 400 Հրդ ամիւր, Նիւ Եորք



ՇԱՐԱԲԱՐԵՐԻ ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱԿԱԿԱՆ
Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,
ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:
Յ. ՂԱՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ .

Table with 4 columns: ԳՐԱԿԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ, ՄԻԱՑՆԱԿ ԼԱՀԱՆԳԱՑ ՈՒ, ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ, ԲԱՆԱԿԱԿԱՆ ՀԱՄԱՐ, ՀԱՄԱՐ.
Rows include subscription rates for 1 year (50¢), 6 months (75¢), and 3 months (40¢).

Մտար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցեին՝
To the DICKRIS PUBLISHING CO., 145 EAST 23D ST. w York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԲ, ՇԱՐԱԲ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 8 1898.

ՆԱՄԱԿ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԵ

Մեծապատիւ Պ. Թաւազանեան
Պատուական Սիրելի մեր,

Ձեր մեծարելի և խորհրդաւոր նամակն ստացայ, յո՞րում մանրամասն հանգամանօք մեր առաջ պատկերացուցած էիք Ամերիկայի ազգայնոց դրուժինն և հովիւներու անհամբաւի կացութիւնն: Ես արդէն ինձ գրուած նամակներէն կը խնամախօսեմ այնպէս որպէս գրած էք:

Սակայն ես գործ համառօտեցի՝ Տէր Յովսէփ Վարդապետն եպիսկոպոս ձեռնադրելով իրբն ընդհանուր հովիւ Ամերիկայի համայն ազգայնոց, և յղեցի այդ: Աւելորդ իսկ էր հեռագիր տալ, համաձայնութիւն խնդրել տարակարծիք ժողովրդէն և համարու ծախք պահանջել և այլն. հոգացի եւ այդ, և միանգամայն Ուսարը Սուրբ Փրկիչ Եկեղեցւոյ պարտուց համար կոնդակ մը տուի Տէր Յովսէփ Եպիսկոպոսին, որ Եւրոպայէն անցած ժամանակ որչափ կարելի է հանգանակութիւն անել և ըստ մասին գոնէ հոգալ այդ պարտքը:

Ճանաչելով զՁեզ իրբն անձնուէր ազգասէր մի պատուական անձն խնդրեմ որ ըստ ամենայնի աջակց լինիք ընդհանուր Հովուին թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյապէս. աշխատեցէք համբարախնդրութիւն կազմել Վարդապետաց մէջ, որպէս զի ըստ ամենայնի կատարեն այն հրահանգներն, զորս յանձնած եմ ընդհանուր Հովուին:

Ոչ միայն կը յուսամ, այլ և կը հաւատամ որ ձեր խնչական աջակցութեամբ ընդհանուր Հովուին, ամէն բան ըստ արժանեոյն կը կարգադրուի որոյ ի սրտէ ցանկացող է 1898 Յուլիս 30 ՀԱՅՈՑ ՎԵՏԱԿԻՐ ՀԱՅՐԻԿ

ԻՐԱՐՈՒ ՀԱՑ ՁԻ ԽԼԵՆԲ՝ Պրուքտընի ցաւալի դէպքը զոր հրատարակած ենք այսօր մեր լուրերու կարգին մէջ, նշանակութեան արժանի խնդիր մէ գոր շինք կրնար լուրեթեմք անտես ընել:

Մեր այն հայրենակիցներ որք գործադու ընող գործաւորներու գործը խելու նուաասութիւնն յանձն կանեն, գիտնալու են նախ թէ ընկերական արդի յոռի գրութեան շնորհիւ բանուորն ու գրամագլուխը երկու անհայտ թշնամիներ դարձած են իրարու, թէ և վերջինն առանց առաջնոյն ոչինչ նշանակութիւն ունի: Իրամագլուխը իրեն պաշտպան ունի ամէն բան կառավարութիւն, օրէնք, կրօնք, զօրք ու կղեր անոր կողմը բռնած են, իսկ բանուորը՝ ժողովուրդներու ահագին մեծամասնութիւնն ու արտադրիչ դասակարգը, իր կողմն ունի իր ուղեղը միայն՝ այդ միացեալ ահագին գործութեան դէմ ինքզինքը պաշտպանելու համար, և այս զէնք ցարդ գործածուած չէ ազդեցիկ կորուցով յօգուտ հարստահարեալ գործաւորութեան: Հասարակաց այս թշնամոյն անիրաւ պահանջին դէմ կուտեւրու արդի գործաւորական զէնքը գործադու ընող և միայն, որ թէ և փախաբեկի արդիւնքը յառաջ բերած չէ գործաւորին, սակայն թոյլ տուած չէ գէթ անկուշտ դրամատիրոջ՝ չոր հացն ալ խլել անպաշտպան աշխատաւորի մանկիկներու բերնէն: Ընկերական ներկայ դրութիւնը մօտէն իմաստասիրող մարդիկ կը վկայեն թէ գործաւորական ընկերութիւններն այս միջոցաւ եթէ չի գիմարելին հաստատոր դրամատիրոջ անհատնում պահանջին, այսօր «քրտամբ երեսաց իւրոց» հաց ճարող մարդը կորսուած ըլլալու էր չբաւարութեան անդունդին մէջ:

Պրուքտընի խնդրոյն այս տեսակէտէ նայելով կրնանք ըսել թէ հոն կարգ մը գործաւորներ իրենց հացը պաշտպանելու համար կուր մը սկսած են յափշտակողին դէմ, որ գործաւոր դասու ընդհանուր թշնամին ճանչցուած է: Երբ կարգ մը հայ գործաւորներ կեղինն ուրիշ քաղաքէ մը Պրուքտըն կերթան գործադու ընող վիճակակցի մը տեղը առնելու, ի հարկէ միացած կըլլան հասարակաց թշնամիին՝ բաղդակցի մը դէմ մաքառելու իշահ արիւնարու հարստահարչին: Եւ հարկ չի մնար թերևս ըսել թէ պարզ դասակարգութիւն մէ այս, որուն համար մեղմացուցիչ պարագաներ գտուարին է գտնել:

Ազգային տեսակէտէ ալ պատարակելի ու փաստակար ընթացք մէ այս, որուն ոչ միայն Պրուքտընի այս մի քանի հայ ըսքէ պնդեն, այլ նիւ ինկլընտ և ուրիշ նահանգներու մեր հայրենակիցք ոմանք հետեւած են շատ անգամ ու կը հետեւին ստէպ: Գործադու ընող բաղդակցի մը հացը խլելով՝ հայ մարդը այս կամ այն քաղաքի մէջ միայն չէ որ կարասուարէհայութեան անունը, այլ առիթ կուտայ գործաւորական ընկերութեանց ընդհանուր մատուցելու դիմել, ու իրենց գաւառական ներկայացուցիչներու միջոցաւ հասնել Ուաշինկթընի կառավարական շրջանակներուն, որք թէ և անկեղծ բարեկամներ չեն գործաւորութեան, բայց այսու հանդերձ երկրորդական խնդիրներու մէջ բանուորին կը ջանան հաճելի երևնալ, իրենց ալիւրը ի հարկին դիւրութեամբ կրնալ աղաւթու համար: Եւ ո՞վ չի գիտեր թէ նոյն կառավարութեան մէջ երկրակէ մը որ կը զարնէ Պարս 0Փ Ֆիլիսին մէջ, ուրկէ բազմաթիւ Հայեր ետ դրուած են՝ շատ անգամ անտեղի պատճառներու համար: Վստահելի աղբիւրներէ լսած ենք քանիցս թէ՛ բաց ի տաճկական ազդեցութեան, որ վերջերս սկսած է աւելի զգալի դառնալ, նիւ ինկլընտի գործաւորական ընկերութեանց կողմէ Հայոց դէմ լուսած բողոքներն քանի քանի նորեկ ազգայնոց կողմէն ընդհանուր պատճառներն եղած են:

Գիշ մը հեռուն խորհող մարդ ըլլանք. ընենք մեր գործաւոր ընկերին ինչ որ կուզենք որ ուրիշներ մեզ ընեն: Երբ գործաւորը գործաւորին դէմ կը զինուի, Իրամագլուխ ըսուած ճիւղաղբ գոտիային ծիծաղով կը ժպտի. և այդ պարագային տակ Աստուած երկինքէն վար գալու է բանուորի զաւակաց ու ընտանեաց հաց տալու համար:

Իրարու հաց չի խլենք, բարեկամներ, որպէս զի կարողանանք ուտելու հաց գտնել: «Տուն փլցունողը տունի տէր չըլլար» . . կըսեն:

ԱՆՏԵՂԻ ԾԱԽՍԵՐ — Ձիքակոյէն Արժ. Տ. Մալթոց Վարդապետը քաղաքս եկած է Սարաճեան Սրբազանը դիմաւորելու համար:

Մենք զարմանալիք ժողովուրդ ենք. երբեմն սէնթի վրայ գլուխ կը կոտրենք, երբեմն ալ մեծ ծախքեր կընենք պարագ բանի համար: Ձիքակոյի ազգային քաղաք Մալթոց Վարդ. Եպիսկոպոսին կրնային բարի գալուստ մաղթել քաղաքիս ազգայիններէն մին ներկայացուցիչ կարգելով, սրով 50 տոլարի չափ ծախք մը ընելէ ազատած կըլլար ժողովուրդն: Ու որչափ զովասանաց արժանի գործ մը ըրած պիտի ըլլային մեր արևմուտքի եղբայրներն եթէ այս անօգուտ ծախքերն յատկացնէին Ձէյթունի դժբաղդ սովելոց: Եւ ո՞վ չի գիտեր թէ Սարաճեան Յովսէփ Սրբազանն շատ աւելի գոհ մնացած պիտի ըլլար Ձէյթունի պնակին մէջ քանի մը տոլար աւելի գտնել քան զինքը դիմաւորողներուն մէջ Ձիքակոյէն մասնաւորապէս եկող Վարդապետ մը: 2. է.

ԳԻՇԵՐՈՒԱՑ ԴԱՍԵՐ Երրորդ Տարի

Պ. է. Ճինիչեանի գիրքային դպրոցը բացուած է 23րդ փողոց, 2րդ և 3րդ ափիւններուն մէջտեղ եղող հասարակաց դպրոցին մէջ: Յարմար առիթ է այս Անգղիերէն սորվելու: Դասախօսութիւնք ամեն գիշեր ժամը 7.30ին:

ՇԱՐԱԲԱԿԱՆ ԳՐՈՒՆԻԿ

Տիտանի հասակով, լայն կուրծքով, խոր սիրտ, յաղթանդամ, առիւծի չափ ուժեղ և առողջ Հայաստանցի մը տեսայ այս օրերը և ժամերով անկուշտ ու կարօտալի դիտեցի զինքը ու սքանչացայ . . .

Տասը տիւր ու երկար տարիներէ ի վեր էր որ ո՛չ Մշտյ լաճ մը և ո՛չ ալ Սասնոյ քաղ մը տեսած էի: Թէ՛ Պոլիս և թէ՛ Եւրոպայ ուսանողական օրերուն մէջ միշտ և միշտ շրջապատուած էի Հայ ուսանողներով. և ամեն Հայ ուսանող ամբած, կէս կամ ամբողջ հիւանդ արարած մըն է: Կարմրուկ այտերով մէկ հաստ ուսանող կը յիշեմ, ան այ. . . Պոլսեցի, մեծասունի զաւակ: Մաղձկոտ անբաժան էր, որ Հայ ուսանողութեան երեսէն անբաժան էր, փառք Աստուծոյ, վերջերս Հայ երիտասարդներու մեծամասնութեան դէմքին վրայ թառած է: Վերջերս հոս հասնող լաճեր տեսայ որոնք . . . դալկազէմ էին:

Աւերիչ ու քանդիչ գաղթականութեան անգութ ձեռքը քաղեց Հայ երիտասարդութիւնը Մայր երկրի կուրծքէն, ու այդ կոկոնները օտարութեան մէջ սկսան թառմալի ու խամբիլ: Եւ այդպէս շուրջերիդ ու տեսէք քանի Հայտ լեցուն երևս ու կայստաւ: Հայ երիտասարդներ կը տեսնէք: Եւ ես սկսած էի կարծել թէ բոլոր Հայ մարդիկը գունաթափ եղած էին. բայց հեռուն Արևմուտքէն, Բալթիֆօրնիայէն հոս այցելող յաղթանդամ կաղմուածքով Հայ մը, Մշտցի Մարգարեանը տեսայ ու համոզուցայ որ խարուած եմ:

Տարնոյ զաւակը նիւ երբքի ծխալից միջնորդուն ու փողոցներուն մէջ չը կրնայով շնչել, զլուխը կուտէ կերթայ Ամերիկայի Տարօնք, Բալթիֆօրնիայ, ու այդ ստողարոյ օղին ու արևին մէջ Մշտցին աւելի կ'առողջանայ. ու այս օրերուս իր պարթև հասակը առած եկած է մեր մէջ, մեկ յիշեցնելու համար Հայու կէս մոռցուած ֆիզիքական փալարը:

Ձէ՛, առողջ մարդիկ ունինք . . . Անցեալ կիրակէ Ուէսթ Հոպօքընի բարձունքի վրան էր Մարգարեան որ նորեկ երիտասարդութեան մեծ խումբի մը նկարագրեց, Մշտցի մը բառերով ու շեշտերով, Ֆրէզնոյի այգիներու կեանքը: Այստեղ անյաղող ու դժգոհ երիտասարդութիւնը յափշտակուեցաւ Ամերիկայի Աւեսաց երկրի երանաւէտ կեանքէն, ու թոխնի կուզէր աւելի ու թոխիլ . . . եթէ չը յիշեր . . . հեռու հեռու բայց սրտի շատ մօտիկ . . . Հայրենիք . . .

Խօսք մը. Պ. Մարգարեան, երկրորդ անգամ մեզ պարզեցէք Արևմուտքի կեանքին սև կողմն ալ. անտարակոյս ըջիկ մըն ալ զբժբաղութիւն այդ կողմերը կայ: Բայց չենք մեղադրել զձեզ, այդ կաղմուածքին մէջ յոռետեսութիւնը չապրի:

Անցեալ կիրակէ առաւօտ վերջապէս խօսեցաւ «Աւետարեան» ծերունի խմբագրիչը երիտասարդներուս:

Այն որ «երկար տարիներ մեր օգտին ու մեր գրականութեան զարգացման համար աշխատած» էր, մեզ շատ մը օգտակար խրատներ տուաւ. բայց խրատներ ալ զրուցեց որոնք մեր . . . թշնամիներու բերնէն կակընկալէինք լսել: «Տեղական ժողովրդին հետ ձուլուեցէ՛ք, Ամերիկացի եղի՛ք» . . . Երբ որոշեցէք Հայ չըլլալ, ուրիշ ազգ մը ըլլաուք քանի մը «հրաժեշտներ» ունինք արդէն, ձերն ալ նկատի կ'առնենք: Եւ Պատուելին՝ իբր անկեղծ Եանքի մը՝ մենք աւելի կը յարգենք քան . . . մերիները որոնք կ'ըլլեն կը յայտարարեն ինչ որ չէ Պատուելին:

Հայ ազգին շորս կողմը «բարեբարներ» կը վխտան ու կը վխտան: Եւ նորէն մեր գլուխուն է որ կուգան աշխարհիս բոլոր չարիքները: Է՛յ, եթէ այս աշխատող բարեկամներն չունենայինք, գուցէ մէկ Հայ մը մնար չըլարուած:

Խեղճ Հայ Գրականութիւն, դուն ալ քու ազգիդ պէս անտէր անտիրական մնացիր: Ո՛չ Ալիշանը և ո՛չ ալ Իւթիւճեանն. ո՛չ Հայր Արսէն և ո՛չ ալ Տէմիրճիպաշեան են քու ընդէ. դարգացումիդ համար յիշողները: Աղքատ կը մնար մեր մասնաւոր աշխարհարար գրականութիւնը եթէ «Աւետարեան» առաջին երեսի տախակ, տաղուկալի և անհամար լեզուի սխալներով ու Անգղիերէնի ոճերով խառնուած անհամ պատմութիւնները լոյս տեսած չըլլային եղիայի գրածներէն վերջ: Թ. Չ.

ԱՐՓԻԱՐԻ ԽՆԴԻՐ

ՈՎ Է ԶՐՊԱՐՏԻՉԸ

Վերջապէս ՏԻԳՐԻՍԸ գովելի անկողնակալութեամբ հրապարակ բերաւ Արփարի խնդիրը և ինքն ալ նոյն գաղափարը յայտնեց ինչ որ յայտնած էին արտասահմանի ուրիշ թերթեր ալ:

«Իբր հեռուէն դիտող ու խնդրովը հետաքրքրուող անկողնակալ ոք, կրնէ իր յօդուածին մէջ, մենք կը կարծենք թէ իրաց այս վիճակին մէջ ամբաստանող անձին կամ անձերուն վրայ կը ծանրանայ մեծ պատասխանատուութիւն — իրենց փաստերն ու տօգումաններն մէջ ընդհանրապէս պատուոյ ատենի մը առջև»:

Խնդրոյն այս կերպով լուծուելը ամեն շայտ բաղձանքն է. բայց խոյս կուտան ամբաստանիչները, ինչպէս ըսած էր Պ. Փափագեան ՏԻԳՐԻՍԻ մէջ. որուն Դաշնակցական մը պատասխանելով կըսէ «Երբ կազմուեցաւ պատուոյ ատենը որուն մօտենայ չեն ուզեր Դաշնակցականները: Կազմեցէ՛ք ատենը, հրուէրը զրկեցէ՛ք տեսնենք իրօք մինչև Ալաքայ կը փարսչին Դաշնակցականները այդ ատենէն»:

Այո՞ Պ. Դաշնակցական, շատ իրաւացի էք որ պատուոյ ատենն չի կազմուել որ հրուէր չի կարգացուել Դաշնակցականաց, որ յայտնուի թէ որչա՛փ հեռու կը փարսչին ատենէն. եթէ այդէ փափաքնիք, այդ ալ կըլլայ որ մը և այն ատենն ալ պոյրներդ կը չտանք: Սակայն եթէ փախող մարդիկ չէք, ինչու Արփարի չափ քաջութիւն ունենալով հրապարակաւ կամք չեք յայտնել ներկայանալու ատենին: Հարկ չէ՞ Դրօշակը յօժարութիւն ցոյց տայ իր կուսակցութեան կողմէ ատենին կազմութեան մասին, և ինչ կը նշանակէ այդքան ատեն լռելը:

Արդ, ո՞վ է կամ ո՞վ կրնայ ըլլալ «զրպարտիչ, Մարտը որ զիմականութիւն կրնէ կեղծարարները և կուզէ լուսաբանել այս խնդիրը, թէ Դրօշակը որ իր կուսակցութեան ճանչցած դաւաճանի մը արարքները քողարկել, և մթագնել կուզէ խնդիրը:

Հնչակեան կուսակցութիւնը կուզէ ասպարէզը մտքերը բազմաթիւ գիրներէ և փաստաւորներէ: Այնպէս կը թուի թէ Դաշնակցականները սիրտ առած են Հրոշակի և ճանկիւղի մասին Մարտի «բաներ» գրելուն համար: Բայց երբ Մարտը իր մասնաճիւղերու դաւանանքին անկեղծ արտայայտիչը կըլլայ, չի կրնար զրպարտիչ մը ըլլալ: Դրօշակ օրկանը զրպարտիչ մ'է երբ կը խմբագրուի քանի մը վարձականներու՝ ձեռքով:

Յեղ. գործին մէջ վարձականները բազմաթիւ գիրներ են, որոնք իրենց շահը ապահովելու համար շատ անգամ զրպարտիչ ալ կըլլան, դաւաճան ալ: Մ. Յ. Ա.

ՎԱՐԱՅՈՒՐԻ ՄԻԻՍ ԶՈՒԹԸ

Ըստ Փափագեանի կարծեաց Արփարը «Գասն տարիէ ի վեր շայ ազգային ազատական ձգտումներուն կարողագոյն ներկայացուցչներէն» մին է. այսօր ալ Յեղափոխական կազմակերպութեան մը պետ:

Իր հռչակաւոր մեղայագիրը գրած պահուն «կարողագոյն ներկայացուցչութիւն» կրնէր, անանկ չէ՛. և «քրտան տարուայ ազատական ձգտումները» կարձանագրէր:

Օ՞ կը ներքէք, այդ մասին չէք ուզեր խօսիլ. ես ալ արդէն խոստացայ նախորդիւս «Մարտ»ով խօսիլ ձեզ հետ: «Յօրկանէ քու մտէ գտնեցիք զքեզ»: Սկսիք:

«Յարութիւն ճանկիւղեան, Աքէայի բանտերուն մէջը եօթը տարի փոտելէ ետք այսօր Եւրոպա կը գտնուի, այն որ Հայ ժողովրդին ազատութեան անդրանիկ մարտին Գալարի դրօշակալիւրը հանդիսացաւ: Յարութիւն ճանկիւղեան 1890 Յուլիս 15 ի Հնչակեան մեծ բողոքին օրը խնդրաւ պատերազմողը եղաւ և տեղն ու տեղը իսկ ձերբակալուելով մահուան դատապարտուեցաւ . . . : Մարմնով թէև տկարացած, ճանկիւղեան կը մնայ հոգով անընկճելի, սրտով խանդավառ, մտքով հաւատացեալ յեղափոխական»: (տես «Մարտ» թիւ 1.)

«Ապուշներու մէջ առաջին տեղը կը բռնէ Հաճին. . . : Այս ճանկիւղեանը ատենօք հատը 5 դուրուշի բապուճ կը ծախէր, ետեւէն խանութ մը բացաւ ու ջուր կը ծախէր: Յուլիս 15 ի ցոյցին մասնակցող բազմութեան մէջ կը գտնուէր. չենք գիտեր ինչ պատճառաւ չարաչար կը ծեծուի մայր եկեղեցիին բակը: Չղային գրքագրուի մին տակ պատրիարքարանի սրահը կը կոտորէ թուրան, ու ետքէն ալ Ազգեան Պատրիարքի կողքը ապաստանելով փախչի կուզէ. բայց ինչպէս կըլլայ օճիքը ձեռք կուտայ դիպուածով»: (Տես Մարտ թիւ 13)

Ահա քեզի տրվար, քսան տարուայ ազատական ձգտումներու. և Փափագեանի այս հանրածանօթ գրազէտը ջուր ծախել Հայրենասիրութեան դէմ գործողութիւն մը կը համարի. սակայն եզրկատուի մէջ արտաբերութեամբ պարապիլը, կուսակցութեան մը օրգանը ամեն տեսակ զրպարտութիւններով լնուլ ըստ քմահաճոյս, մեծ հայրենասէր լինելու նշան է:

Ահա այս անձն է որուն համար կըրտի թէ «պատուոյ ատենի» մը առջև դատուելի կուզէ: «Անամօթին երեսը թքան ըսաւ անձին կուգայ»: Վարդուրի այս ճոթէն ալ Արփարի . . . իութիւն տես, Պ. Փափագեան, սակայն չը կարծես թէ ինչիւրը վերջացաւ. քու գրութիւն դեռ «շատ ջուր կը վերցունէ»:

Կրկին կը տեսնուինք:

Ա. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ

ՄԱՐՏԻՆԻՍ ԿՈՂՈՊՏԻՉՆԵՐԸ

Ամերիկայէ Հայրենիք վերադարձող Հայ մը հետեւեան կը գրէ Մարտի խոյնը:

«Գասն օրէ ի վեր Մարտի խոյնը կը գտնուի մ. և մեկնելէ առաջ կուզեմ մի քիչ տեղեկութիւն տալ հոս գրտնուող մի քանի Հայ կողմակալներու ընթացքին վրայ:

Հոս կը գտնուին ի . . . եան և Բ. . . ունի անուն երկու անձեր, որք իրենց շուրջը մի քանի ընկերներ հաւաքած հոս հանդիպող Հայ ճամբորդները կը կողոպտան: Առ ի գրուածութիւն Հայրենիք վերադարձող Հայրենու պարզեմ իմ քսանօրեայ փորձառութիւնս:

Գասն և հինգ հոգի էինք երբ Մարտի խոյնը կայարանը ելանք. հոն տեսանք որ շատ մը Հայեր մեզ կըսուէին. իրենց մէջ իրարանցում մը կար. մին միւսին ձեռքէն զմեզ յափշտակել կաշխատէր: Մեզ առաջնորդեցին Պ. ին: Օրը երկուշաբթի էր. և Երազաթ օր Մէսէժերի նաւը պիտի մեկնէր: Մեր առաջնորդներուն հարցուցինք թէ կարելի չէ՞ր այդ շոգեմաւով մեզ զրկել. բայց սրովհետեւ այդ ընկերութեան հետ ո և է յարաբերութիւն չունէին, ու չի պիտի կրնային մեզ կողոպտել: Նանցին համոզել թէ այդ նաւը կամաց կերթայ, առանց անցազրով ճամբորդ չառնել, եթէ առնէ առնէ ալ մարդ զլուխ 65-70 Փրանք կը պահանջեն:

սպասեցէք Փաքէով զրկենք ձեզ, որպէսզի աման ըլլայ: Ընկերներէս ոմանք համոզուելով մնացին ու կողոպտուելով Բաքէով զրկուեցան, իսկ մընացեալք Պ. Գ. Սարաֆեանի միջոցաւ Մէսսօթի ընկերութեան գնեցին իրենց տոմսեր իւրաքանչիւրը 60 Փրանքի. և որովհետեւ 13 հոգի էին ու Ընկերութիւնն խոստացած էր ժամանակին 10 մարդու գըլուխ մէկ մարդ ձրի զրկել Սամսոն, ուստի ամէն մէկը 55 Փրանք վճարած եղաւ:

ՃԱՄԲՈՐԴ ՄԸ

ԹԱՆԳԱՐԱՆԻ ԺՈՂՈՎԻՆ ՇՈՒՐՋԸ

Եթէ ողորմած հոգին Պարոնեան ողջ ըլլար երէկ երեկոյ և Նիւ-Եօրք գտնուելու դժբաղդութիւնն ունենար, թերևս հետեւեալ կերպով նկարագրէր Հ. Ե. Թանգարանի Միութեան տարեկան ժողովը:

«Երէկ երեկոյ երեք թանկագին ժամեր վասնեցինք ինտիմէնտէնտ Հօլին մէջ, որոք իւրաքանչիւրին համար վճարեցինք մէկտօյար. չորրորդ ժամ մըն ալ պարապ անցուցինք հայկական ժամադրութեան արժանի յարգանքը տուած ըլլալու Համար: Ժողովը Յին հրաւիրութեան էր, բայց Յին սկսանք: Շատ մը նոր բաները սեցինք. եթէ աւելի չըլլանք, յանցանքը մերը չէր, այլ դուրսը բարձրակին վրայէն սուրացող զոգեկառաց խուլ կառուկուրն որուն անմիջապէս մօտը կը գտնուէր ժողովարան: Անշուշտ բոլոր պատահաններն գոցել չէր ըլլար, որովհետեւ գլանիկներու մուխին ու ծուխին մէջ խնդրուելու համար ժողոված չէինք, հապա թանգարանի Միութեան նոր վարչութիւն մը գոյացնելու՝ հին պայմանաժամը լրացած ըլլալով: Երեք ժամու մէջ երկու ատենապետ փոխեցինք, Միութեան սահմանադրութեան արդարութիւնը ըրած ըլլալու համար: Միութեան 90 ի մօտ անդամոց միայն 17 ի ներկայութեամբ ժողովը կանոնադրական ըլլալով, 18ը անգամով ժամը ճիշդ 9ը 5 անցած գործի սկսանք: Գասնի մը հրերբ ալ ունէինք որոնք եկած էին կարծես զաւելտարադի մը հանդիպանք ըլլալու: Միշտ կը խնդային: Պաշտօնէից ընտրութեան համար ժամ ու կէս վատնել հարկ եղաւ, քանզի իւրաքանչիւր պաշտօնեայ զատ զատ թեղթով պէտք էր ընտրել: Յատկապէս ժողովին տեսնուեցաւ որ ներկայից կէսէն աւելին պաշտօնով մեկնեցաւ: Եղան վայրկեաններ որոց մէջ սպասեցանք անդամ կամ չանդամ ամենն ալ պաշտօնեայ ընտրել. բայց խոհուն պարտի մը գիտողութիւնը թէ «բանակի մը մէջ ամեն զինուոր թընդանօթ չի կրնար նետելը սթափեցուց մեզ: Միութեան տեղեկագիրն ալ լսեցինք. ահա համառօտութիւնը — Միութիւնը ընկերացարանի համար սենեակ մը վարձած է ամիսը 8 ը տօլարի. գրքերը դեռ կորսուած չեն: Գրեանց անուններն ալ պիտի կարդացուէին, բայց խնայուեցան մեր սկանջի թմրուկները: Նախորդ պաշտօնէութեան շնորհակալութիւն քուեակարկելու առաջարկն ալ օրակարգէն գալով անշուշտ ձեռք վերցուցինք, բայց չը հասկցանք թէ երախտագրութեան ցոյց մըն էր թէ բողոքի: Չը մոռնանք յիշելու թէ օրակարգի ոգիին հետեւելով ընտրութեան մէջ արժանի ու անարժանի խնդիրը երբէք նկատողութեան չառնիք: Յին սկսած ու կէս գիշերին վերջացած մեր ժողովը 5 վայրկեանի դադար մը ալ ունեցաւ: Երեք ժամ անդադար խօսիլն առողջաբանական օրէնքներուն դէմ ոճիւր է: Չերկարենք, ժողովը փակուեցաւ. բայց տակաւին

մեզ հանելուկ կը մնան սա հարցեր — Հ. Թ. Միութիւնը ինչ ըրած է գրքեր հաւաքելէ գաս. ինչ կրնէ և ինչ մտադիր է շընել. ինչու ուրիշ քաղաքացիներ ալ մաս չեն ունենար Միութեան վարչութեան մէջ և պատասխանատուութիւնը Տիգրանակերտցոց վրայ կը թողուն. ինչու ժողովականները մեծ մասամբ Գօլճեփօյնթէ, Փաթըրսնէ և Հարմէ եկած էին, մինչդեռ ժողովարանին շուրջը բնակող Հայեր, կը բացակայէին: Միթէ Մալաթիացին, Սարբերգին կամ Արարկերցին Միութեան գործին չըխառնուելու բանաւոր պատճառներ ունին: Ներկայացուած անդամներն ինչպիսիք ձայր ցաւալի էր. չը գիտցանք թէ թէ քանի Հայեր գիրք կարդալ սկսած են. թէ ընկերացարանը քանի այցելուներ ունեցած է. թէ ուր է ժողովրդին թուութեան գաղտնիքը:

Իթէ ցոյցի և փաստաւորութեան համար բացած էք գրադարանը, Պ. Վարչներ, այդէ կըլլայ որ փակեք. եթէ ոչ գործ ցուցէք — ներեցէք ուրիշ բան մալ ըսեմ. արդեօք այս առաջին ժողովն է որ կուսենք. եթէ առաջինը չէ, հապա ուրեմն ինչու ձեր ինչ ինչ շարժմանց մէջ կը գեղեկէիք որպէս համարակ: Աղէկ չըլլար որ կանոնադրութիւն մը ունենալու ընտրութեան կերպերը բացարձակ ու ատենապետի պաշտօնը որոշող, որպէս զի ի պահանջել հարկին չը ներդրէ:

Ու Պարոնեան մտախոհ ու գըլխիկոր պիտի մեկնէր իր սոցիոլոգիները թոթուելով: Թերևս դժոխքին դանէն անցած ատեն պիտի տեսնէր արձանագրուած «յոյսերով մի մօտենար ինձի» նշանարանը և ուրախ պիտի ըլլար որ հեռի էր այնպիսի ժողովէ մը ու խնդայէ աւելի լրջութիւն և խօսքէ աւելի գործունէութիւն հարկաւոր էր: ՍԻՐԱՆ

Ջ Ո Ւ Ա Ր Զ Ա Լ Ի Բ

Դատաւորը — ինչ տեսակ գողութիւն ըրած է սա մարդը՝ Ոստիկանը — առանց Լայսէնսի խաշագողութիւն:

Դատաւորը — Գնա՛ տեղէ մը Լայսէնս մը առ. գրին տօլար մ'է միայն: Ամբաստանեալը (մոմաւոր) Երդում կրնէմ ձգել այս արհեստը. թէ պատուիս փաստ, թէ ազգիս փաստ և թէ քսակիս: Ես նորէն սկսեմ իմ սափրիչութեանս: ՍՈՒԻՆ

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ ՏԻԳՐԻՍԻ

- Պօսթոն — Ղազար ՏԵՐ Մանուկեան
- Փրօվիտէնս — Նազարէթ Թափէնոսեան
- Հօրէնս — Ս. Պոյաճեան
- Մօլաբն — Ա. Մեծատուրեան
- Ուէսթ Հօպքըն — Յ. Աշտեան
- Հալըհիլ — Տ. Մուրատեան
- Ֆրէզնօ — Յ. Մ. Նշիկեան
- Պրայթըն — Մ. Գալուստեան
- Ուսթըր — Յ. Բարակեան
- Լին — Հ. Կ. Պէրպէրեան
- Հըտսըն — Գ. Ա. Պալթայեան
- Սէլիմ — Հ. Կօշկարեան
- Ֆիշպըրկ — Ս. Հինթիեան
- Նաշուէ — Պ. Պորագեան
- Մանչէսթըր — Մինաս Արոյեան
- Յօլ Բիվըր — Ս. Պ. Միհրակեան
- Բոթոյ — Մ. Կ. Հայրապետեան
- Ըսթամֆըր — Ղ. Բուզայեան
- Շքիակօ — Պ. Ա. Կէլճեք
- Ֆիլատէլֆիա — Համբնտ

ՈՒՇԱՒՐՈՒԹԻՒՆ
Լրագրոյս նոր հասցէն է.
145 East 23rd ST.,
New York City

